ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ ապրիլի 20-ին տեղի ունեցավ Հայ Եկեղեցու Հայաստանյան թեմերի առաջնորդների ժողով, որը քննության առավ քրիստոնեական դաստիարակության առաքելության իրականացման և թեմական ու համայնքային կյանքի կազմակերպական խնդիրներ: Ժողովականները անդրադարձան նաև Հայաստանում ներքաղաքական իրավիճակին և ուղերձ հղեցին ժողովրդին:

Հայաստանի թեմակալ առաջնորդներս միահոգություն ենք հայտնում ստեղծված ներքաղաքական լարվածության շարունակության առնչությամբ և անընդունելի համարում հատկապես տարածաշրջանում վճռորոշ զարգացումների ներկա իրավիճակում քաղաքական ցնցումների ուղին, որը առճակատումների առաջնորդելով խորացնում է անհանդուրժողության ոգին ու պառակտումը ժողովրդի մեջ և վտանգում կայունությունը Հայրենիքում ու անվտանգությունը մեր պետականության:

Ապրիլ 24-յան խորհրդի առջև կոչում ենք համայն մեր ժողովրդին, պետական կառույցներին, քաղաքական ուժերին ու հասարակական կազմակերպություններին՝ հավատարիմ մնալ Մեծ Եղեռնի մեր զոհերի նվիրական հիշատակի լուսեղեն խորհրդին, որն ամբողջացումն է ազգային անկախ պետականության և ազատ ու ապահով կյանքի մեր ժողովրդի դարավոր ձգտումի, որով միշտ զորացել է ազգային միաբանության մեր ոգին:

Մեկն է շահը Հայրենիքի ու ժողովրդի, հետևաբար՝ կարողանանք հաշտության ոգով ունկնդիր լինել միմյանց, որպեսզի գտնենք հայրենաշինության անհրաժեշտ ճանապարհները: Մեր բոլոր հարցերին ու խնդիրներին պատասխանները պիտի փնտրենք օրինականության պահպանման նախանձախնդրությամբ՝ հանդուրժողության, փոխադարձ հարգանքի ու ըմբռնողության եղանակներից՝ գերագույն նպատակ ունենալով մեր Հայրենիքի ներքին անդորրն ու կայունությունը և ժողովրդի միաբանությունը:

Մենք հավատում ենք, որ զատկական այս հոգենորոգ շրջանում, երբ Հարուցյալ Փրկիչն Իր խաղաղությունն ու սերն է տարածում մեզ վրա, կկարողանանք հաղթահարել ներքաղաքական այս անհանգիստ վիճակը նաև՝ հուրախություն մեզ և մեր բարեպաշտ ժողովրդի ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի: